

## ԹԱԿԻՐԻԶԻ ՀԱՅ ԿԵՆՆՔԻՑ

Պարսկահայը, շնորհիւ իւր ճնշուած, հարստահառուած և ստրուկ դրութեան, օտարների՝ իւր տէրերի առաջ իւր կոյութիւնը պահպանելու համար միշտ գլուխ խոնարհելով, քծնելով, մահմեղական տարրի մէջ ապրելով,—կարելի է ասել, որ քիչ չափով չէ ալլասերուած: Բազմաթիւ են այն պատճառները, որոնք թաւրիզեցի հային մինչև ոսկորների ծուծը փչացրել, ապականել են: Եւ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել. նեխած, փչացած մթնոլորտում դարերով շարունակ ապրել և չարանաւուել, այդ անկարելի է:

Սորեկ օտարականի վրայ սարսափելի տպաւորութիւն է թողնում այս ցաւալի երևոյթը: Եւ կարծեմ, այստեղից մեր մամուլի մէջ յաճախ երևացող թղթակցութիւնների 100-ից 99-ը վերտբերում է հասարակական (?), քաղաքական և այլ պատճական նշանաւոր թէ աննշան դէպքերին, բայց անուշադիր է թողնւում ամենամեծ, ամենաթարախոտ վէրքը, որը և այստեղի հասարակական գործերի անմիջամար դրութեան բուն սկզբնապատճառներից մէկն է:

Ես չեմ կարող երևակալ այնպիսի մի ժողովուրդ. որը այնչափ սիրէր, փալփալէր բամբասանքը, զրպարտելը, որպիսին թաւրիզեցի հայի ամենամեծ առաքինութիւններից մէկն է կազմում:

Նախանձը, չարամտութիւնը գտել է իւր արժանի բունը և ամենախորը արմատներ գցել: Այլևս լուս եմ պարսկաստանցուն յատուկ այն զգուելի կեղծաւորութեան մասին, որը յալտանի է ամբողջ աշխարհին:

Ի՞նչ անուանել այն մարդին, որը զուրկ է մարդկարին ինքնասիրութեան ամենափռքըրիկ զգացմունքից, որը ըստ գիտէ յարգել իւր և իւր ընտանիքի պատիւը,

Նամուսը: Խորին ցաւով ամէն քալափոխում տեսնում ենք, որ հայ կինը, հայի այն մաքուր օջաղի միակ պաշտպանը, իւր ամօթխածութեամբ, մաքրութեամբ և կրօնական չերմեռանդութեամբ հայ կինը, որի բարոյականութիւնը և մաքրութիւնը վէպերի և բանաստեղծութիւնների նիւթ է գարձել, ալսօր ալդ հայ կինը Թաւրիզում և նորա գաւառներում բոլորովին ալլ պատկեր է ներկայացնում. բարոյապէս ընկած է իւր առաջուալ դրութիւնից. նա այժմ այն չէ, նա վարակիչ, վատ, չափազանց վատ օրինակ է տալիս թէ իւր զաւակներին, ընտանիքի անդամներին և թէ ուրիշներին.

Թաւրիզում ապրող հայերը 800 տուն են: Ալդ մի բուռն ժողովրդի մէջ այնպիսի ողերգական, արկածալից և խալտառակ դէպքեր են յաճախ կատարւում, որպիսիք դժուար թէ տեղի ունենան Կովկասի ամենաբազմամարդ հայաբնակ քաղաքներում:

Խիստ սովորական երևոլթների շարքն են անցել նշանը լետ տալը, ամուսնալուծութիւն, դժբախտ ամուսինների փոխադարձ անհաւատարմութիւն (վերջինս՝ ամենասոսկալի՝ չափով), ընտանիքի պատիւը նոյն ընտանիքի հալը համարուող զզուելի մարդու ձեռքով թուրքերին ծախելը, և դոցա նման խալտառակ և միենոյն ժամանակ ցաւալի երևոլթները: Միջավայրը, մըթնոլորտը այնքան է ապականուել, որ օրերս մի հայ, որ մի ամբողջ դասակարգի (ոսկերիչների) «ըաշի» էլ է համարւում, հրապարակով տեսէք թէ ինչպէս խոստովանուեց և ուզեց արդարացնել իւր բարոյապէս ընկած ընտանիքը: Տեղացի երիտասարդներից մի քանիսը չեն կարողացել տանել այն բանը, որ մի ոմն մնաշաղի օրը ցերեկով մտնում է հայ ընտանիքի տուն, կնոջը կառքով զբօսնելու է տանում, նորա տանը գիշերում ու առաւտօտեան շապկանց բարձրանում տան կտուրը, որ իրեն տեսնեն միւս հարեւան հայ ընտանիքը, դորանով պարծենում է ևալլն: Եւ ալդ բոլորը տեսնում է, տարիներից ի վեր գիտէ ալդ մասին ընտանիքի անարժան հայրը և լւում, նոյն իսկ... հրճում է: Եւ երբ լետով երիտասարդները մահ են սպառնում թուրքին՝ եթէ վեր-

ջինս միւս անգամ երևալ հայ ընտանիքի տանը, նոյն հայ ընտանիքի հալր համալրուղ զարգարբաշին տեղիս առաջնորդին բողոքում է երիտասարդների դէմ և աշխատում արդարացնել իրեն սիրելի հիւր թուրքին, ասելով՝ «սովորաչի» (խօսակից) եմ գտել, թուրքը հիւպատոսարանումն է ծառայում, գործ ունիմ, ժամանակին կօգնէ:

Տեսէք թէ իւր ընտանիքի պատիւը թաւրիզեցին ինչ գնով է ծախում մաշագուն. և դոյնանման օրինակներ որքան ուզէք: Եւ զեռ սա այն հայ կնոջ պատկերն է, որը ունի տմուսին, երեխաներ .. ձեզ եմ թողնում երևակալել, ընթերցող, այն կնոջ դրութիւնը, որ ալրի է, տէր ու տիրական չունի, կամ որի էրիկը պանդխութեան մէջ է գտնուու: Վերջին տիսուր հանգամանքը (պանդխութիւնը) մեծ չափով տեղի ունի և գաւառներում, օրինակ Սալմաստը, որ ալդ կողմից յալտնի է. ալդուեղ լիշեմ մի գիւղ, Խոսրովա, ուր կայ 30 հայ ընտանիք, բոլորը կանալք և երեխաներ. տասը տարեկանից վեր հասակ ունեցող տղաներ և տղամարդիկ չը կան, բացի մի հատիկ ծերունուց, որը երևի դարձեալ պանդխութեան կը դիմէր, եթէ անդամալուծ չը լինէր: Ասած բառացի ճշմարտութիւն և շատ բնորոշ երևոյթ է ու ուշադրութեան արժանի:

Թաւրիզում երկու թէ երեք տարի առաջ, Պարսից կառավարութիւնը, ասում են, տեղական առաջնորդին ներկայացրել է 70 հրս պարակական հայ պոռնիկ կանանց մի ցուցակ և խնդրել է նորանից զսպել կամ քաղաքից հեռացնել գոյա: Եւ ալդ 70 ը դեռ հրապարակական էին. բայց քննի քանիսներն են գաղտնի կերպով նոյն զզուելի արհեստով պարապում, քննի քանիսներն են թունաւորում թէ իրենց և թէ իրենց երեխաների ու ընտանիքի կեանքը, ապագան, սերունդներ փշացնում, անուն արատաւորում...

Դոցանից ոմանք զոհ են աղքատութեան, չքաւորութեան. իրենց անօգնական երեխաների և իրենց օրեկան պարէնը ձեռք բերելու համար են դիմել թաւրիզում ալդպիսիների համար միակ հնարաւոր արհեստին: Ոմանք սովորել, ընտելացել են հարեմական կեանքի,

ոմանց համար էլ ախտ, հիւանդութիւն և առանձին հաճովք է դարձել ալդ, և ոմանք էլ... դիրք ձեռք բերելու համար Անշուշտ չես հաւատայ, ընթերցող, բայց գիտցիր, որ Թաւրիզում ալդպիսի բաներ էլ է կատարելու մ. և ալդպիսի կանալք կոչւում են խանումներ ու կառավարչութիւն պաշտօնեաների մօտ մեծ դիրք և ազգեցութիւն ունին. որոնք պոռնիկ են, պոռնկութիւն են անում միմիայն խաների և մեծամեծ պաշտօնեաների համար. որոնք միմիայն ալդ դասակարգի նշանաւոր մարդկանց են ընդունում իրենց մօտ, որոնք իրենց տանը պաշտօնեաների հետ միասին խորտիկներ վայելելիս՝ վճռում են այս կամ այն կալուածական և այլ խնդիրներ. և ով կը համարձակուի ալդպիսի մի խանումի խաթրին գիտչել. իսկոյն հրաման կարձակի և լոնցաւորին պատժել կը տար, եւ ալդպիսի խանումը դիրք, ազդեցութիւն, պատիւ ունի և հայ ջօջերին մօտ, տանէնքը նորա անունը պատկառանքով և ահ ու գողով են տալիս... Ահա մի հասարակութիւն, որը ամբողջովին համարեա գերի է դարձել կնոջ ձեռքին, փոխանակ նորան մէջ տեղից վերացնելու և խալտառակութիւններին մասամբ վերջ տալու. Աշխարհահռչակ Տօլստոյը եթէ տեսնէր Թաւրիզում տեղի ունեցող երևոլթները, «Յարութիւն» վէպի պէս քանի քանի ուրիշ վէպեր կարտադրէր. նորան ալդպիսի դրամաների համար բազմաթիւ նիւթ կը տար Պարսից դատարանը, որտեղ դատուող կանալք կամ տղալք դատուում են ալնպիսի մարդկանցից, որոնք հենց իրենք են եղել դժբախտների առաջին անկման պատճառը, որոնք գիշերը նոցա տանը լին են անում, իսկ առաջանան դատուում մի ինչ որ խնդրի համար ..

Հայ կանանց մեծամասնութեան ընկնելու պատճառը, իսկապէս, եթէ քննելու լինենք, կը տեսնենք որ աղքատութիւնն է, անպաշտպանութիւնն է, գոյութեան կոիւն է. մի կին, որ ունի չորս երեխա, չունի ամուսին, չունի բարեկամ, (ազգական ունի), չունի մի կոպէկ եկամուտ, ոչ տուն, ոչ տեղ, չի կարող երեխաների մօտից հեռանալ և գնալ ուրիշի տուն՝ լուացք անել, կար անել ու փող աշխատել,

իսկ տեղացիներն այդպիսիներին աշխատանք չեն էլ տալ... Ի՞նչ անի ալդպիսի կինը, որին իրեն եղբայրն անդամ չի օգնում, իրեն եղբայրը: Զես հաւատալ, ընթերցող. սա ևս իրականութիւն է. հարուստ, դիրքի տէր եղբայրը չի օգնում այնպիսի քրոջը, որը կոպէկներից զուրկ լինելու պատճառով է ընկել, որը արիւնարցունք թափելով խոստովանում է իւր լանցանքը, որ ինքը այդպէս է վարուել միմիայն իւր երեխաներին գոնէ ցամաք հաց և ճրագլուս ձեռք բերելու համար:

Եւ այդ՝ Թաւրիզի «զոջ» եղբայրը, եթէ չի օգնում իւր քրոջը, գետին էլ չի մտնում, չի էլ ամաչում այն բանից, որ պղծւում է իւր քրոջ պատիւը և ամենայն ինչ, իսկ ինքը պատուաւոր, դիրքի տէր է համարւում...

Եւ ալդպիսի եղբօրը թաւրիզեցիք փառաբանում, գործերի գլուխ են կարգում, այն էլ այնպիսի գործերի, որտեղ պահանջլում է կուռել հասարակական բոլոր վատ փշացած բարքերի դէմ, ազնիւ, մաքուր, պատուսէր, կենդանի օրինակ ցոյց տալ ուրիշներին...

Ամօթը այս դէպքում մի ամբողջ հասարակութեանն էլ է, մի ամբողջ դասակարգին, և ոչ թէ միայն դիմակաւորուածներին:

Ո՞հ, չափազանց շատ են այդպիսի սրտաճմլիկ դէպքեր. մենք սովորել ենք միշտ ակնոցներով նալել մեր, մեր կեանքի և մեր գործերի վրայ, աշխատել ենք հտաստալ, համոզուել, որ մեր կեանքը բարեյաւում է, որ մեր վէրքերը բուժւում են, բայց իսկապէս ինքնախարէութեան մէջ ենք, սոսկալի ինքնախարէութեան: Մէքէ խորը թմբիանցէք ամեն բանում, մի քիչ քննադատական աշխով վերաբերուէք ձեր զրջապւտին, և ձեր աշքի առաջ կը պատկերանալ մեր ասիական փուչ բարքերի ամբողջ գարշելիութիւնը, զզուանքը իւր իսկական գոյներով:

Լուսաւորութիւնն էլ է սիալ հասկուցուել Թաւրիզի հայ ընտանիքներում, և ալդ պատճառով նա էլ, լուսաւորութիւնն էլ է որոշ չափով նպաստել ընտանիքը անբարոյականացնելու գործում...

Օտարականի, նորեկի վրայ սարսափելի տպաւորութիւն է գործում Թաւրիզի հայ ընտանիքը: Նորեկը

ապշում է, տեսնելով «զարգացած» օրիորդների, տիկինների այն ազատ, համարձակ վերաբերմունքը դէպի իրեն, լսելով նոցա լպիրշ խօսքերը, որոնք ասողին քաղաքավարի են թում, և տլին և ալլն: Այդտեղ չը կայ, չը կայ հայ կնոջն ու նորա օջաղին յատուկ ամօթիածութեան ու պատկառանքի նշոյլն անգամ: Եւ լուսաւորութիւնը, զարգացումը այս խեղճերը «Ժարս» են հասկացել. բերեմ իրական կեանքից, վերջերս տեղի ունեցած մի օրինակ, որը կը բնորոշէ Թաւրիզի, այսպէս ասած, «կըթուտծ» հայ աղջկալ տիպը:

Մի նշանուած օրիորդ, որի փեսացուն էլ տեղումս է լինում, սիրալին արկածների մէջ է մտնում մի ուրիշ երիտասարդի հետ: Այդ մասին երբ տեղեկութիւն են տալիս աղջկալ օտարութեան մէջ գտնուող եղբօրը, և երբ վերջինս յանդիմանում է քրոջը, —օրիօրդը այսպէս է պատասխանում նորան նամակով.

—«Վաղուց է անցել ստրկութեան դարը. այժմ քսաներորդ դարումն ենք ապրում. կանալք ազատ են տղամարդկանց բոնապետութիւնից և կարող են անել, ինչ որ ուզենան...»

Խեղճ լուսաւորութիւն, խեղճ եւրոպա, չեմ կարծում, որ քեզանում այսպիսի հերոսութիւններ կատարուին...

Չնալած Թաւրիզի հալութեան բարոյական այս անկման դրութեանը, ալսուել կան բազմաթիւ ընկերութիւններ, որոնք միմիայն ձեական կերպարանք են ստացել, բացի մի քանիսից:

Մի քանի հոգի հաւաքւում, կանոնադրութիւն են «մշակում», տպել են տալիս, մի փքուն, ճրճուան անուն էլ վրան դնում և ի լուր աշխարհի յայտարարում, թէ ընկերութիւն է կազմուած: Բազմաթիւ են այդպիսի ընկերութիւններ, որոնց մեծ մասը կազմուել է միմիայն անունով գոլութիւն ունենալու համար: Դոցանից ոմանք էլ այն ցանկալի օգուտը չեն կարողանում տալ, ինչ որ կարող էին, եթէ մէկ տեղից վերանային այն չարաբաստիկ, հայերիս տունը քանդող «Եւ»-երը և կամայականութիւնները: Ցիշեմ ընկերութիւններից

մի քտնիսի անունները. — «Եռանդ» ընկ., «Յոլս» ընկ., «Աղքատախնամ» ընկ., «Թատերասիրաց» ընկ., (երկուաը՝ Լիլաւալի և Ղալայի), «Երաժշտասիրաց» ընկ., «Հայութեաց բարեգործական» ընկ., «Դպրոցական բարեսիրական» ընկ., «Հակալիկոլական» ընկ., «Լսարանական» ընկ. ևալլն ևալլն... Եւ այդ բոլորը կազմուել են նախաձեռնութեամբ դրսեցիների և այն տեղացի երիտասարդների, որոնք գործ չունենալով՝ պարապ թափառում են փողոցներում, և սրպէս զի մի բանով զբաղուեն, — ընկերութիւն են կազմում, ժողովներ անում ու հայոց ազգի ցաւերը դարմանում...

Որ Թաւրիզում վնասակար ախտ, հիւանդութիւն է գարձել ընկերութիւններ կազմելը, դորանում կազած չը կալ:

Տեղիս տպարանումն էի, երբ Արսմեան դպրոցի աշակերտները՝ մի գրած տետրակ ձեռներին՝ ներս մտան և առաջնորդից թոլլտութիւն էին խնդրում այն տպելու: Վերցրի ձեռագիր և կտրդացի. կարծեմ «Աշխոլժ» անուանուած մի ընկերութեան կանոնադրութիւն էր այդ, որի ճակատին խոշոր տառերով գրուած էր հետեւեալը. — «Երրորդ դասարանցի աշակերտներից» կազմած ընկերութիւնը նպատակ ունի Պարսկաստանի զանազան մասերում դպրոցներ և գրադարաններ բանալ, որով մի փոքր նպաստած կը լինի խղճուկ ազգիս ողորմելի առաջադիմութեանը»...

Ծիծաղելի է, բայց և փաստ է սա...

Իսկապէս որ խղճուկ ազգ ենք, որ երրորդ դասարանցի երեխանների մէջ նորանց «գաստիարակները» ալսպիսի մի համոզմունք են դրել...

Վերջին չարիքի պատճառներից մէկն էլ պէտք է փնտրել այն բանի մէջ, որ դպրոցական նոյն իսկ առաջին նախակրթարանի երեխալին «կուռեցէք տղէրք» և դորա նման երգել են սովորեցնում, և երեխան, ի հարկէ, առանց հասկանալու, «խղճուկ ազգիս» և նորա ողորմելի առաջադիմութեան» մասին ամենավատ համոզումն է կազմում ու այդպէս էլ մեծանում...

Բայց որքան են նպաստել դրսեցիները Թաւրիզի

Հայ ընտանիքի բարոյականի բարձրացման մասին: — Մազաշափ անգամ չեն նպաստել:

Թէւ, ինչպէս ասացի, կան զանազան բարենպատակ ընկերութիւններ, կայ, օրինակ, «Լսարանական» ընկերութիւն, որը երեք թէ չորս տարի է ինչ գոլութիւն ունի և տարեկան քսանի չափ դասախոսութիւն է տալիս, կարդում են զանազան տեսակ նիւթերի մասին. օրինակ աստղաբաշխութեան, հնագիտութեան, բնագիտութեան, դարվինիզմի, էվոլյուցիայի, բայց ոչ երբէք բարոյականութեան, երբէք Թաւրիզեցուն չեն տալիս նորա պատկանուած, նեխած կեանքի, կենցաղի ճշգրիտ զզուելի պատկերը. չն եղել մինչև ալժմ մէկը, որ հրապարակով բողոքէր արդախիսի Հայ ընտանիքներում տիրող անբարոյականութեան դէմ, դէն զցէր այս ճահիճը ծածկող քողը և Թաւրիզեցու առաջ դնէր նորա պակաս կողմերը ու ցոյց տար բարոյականութեան ուղիղ ճամբան: Դորա պատճառն էլ մասամբ այն է, որ վախում են, որովհետև արդախիսի մի «լանդուգն» քալով վիրաւորած կը.լինին Թաւրիզի Հայ «ջօջերի ինքնասիրութիւնը, որով՝ ետև նոքա, որոնք ձեռնհաս են արդախիսի քայլ անելու, որևէ բանով կապուած են արդախիսի աղաների, ջոջերի հետ, իսկ այս վերջինների և խանումների կոչման ու անձնաւորութիւնների մեծամասնութեան հետ սերտ կերպով կապուած է... անբարոյականութեան զաղափարը...»

Վերջացնում եմ այս անգամուան ասելիքս բացարձակ կրկնելով, որ ոչ մի բան Թաւրիզում այնպիսի հսկալական քալերով չէ առաջադիմում, որքան անբարոյականութիւնը: Պէտք է վերջապէս թողնել պօռոտախօսութիւնը, թողնել կեղծ քարոզները և աշխատե՛ալու սոսկալի վէրքը բուժել, որից կախուած են մնացած բոլոր ազգային, հասարակական, անձնական և այլ գործերի ցանկալի դրութիւնն ու աշողութիւնը, որովհետ միմիայն բարոյականութիւնն է, որ ազնիւ կերպով ղեկավարում է այն ամենը, ինչ որ գովասանքի և համակրանքի է արժանի:

Ազատեան.

Թաւրիզ.